

ՎԱՐՂԱՆ ԱՐԵՎԵԼՅՈՒ «ՀԱՒԱՔՈՒՄՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ԵՐԿԸ

Գ. Բ. ԹՈՍՈՒՆՅԱՆ

Հայ նշանավոր պատմագիր, աշխարհագրագետ, իմաստասեր, մանկավարժ, թարգմանիչ, մեկնիչ, հասարակական, եկեղեցական գործիչ Վարդան Արևելցիի ծնվել է 1198 թ., Գանձակում, մահացել 1271 թ., խոր Վիրապում:

Հայ մատենագրության մեջ Վարդան Արևելցիի հայտնի է նաև բազմաթիվ այլ անուններով, ինչպես՝ Վարդան Գանձակեցի, Վարդան Կիրիկեցի, Վարդան Մեծ, Վարդան Վարդապետ, Վարդան Պատմիչ, Աղվանից Վարդան և այլն: Բացի այդ, Վարդան Արևելցիի իր ապրած կամ մերձակա ժամանակաշրջանում ունեցել է մի քանի անվանակիցներ, ինչպես՝ Վարդան Հաղպատեցի, Վարդան Այգեկցի, Վարդան Բարձրբերդցի, Վարդան Վանական և այլք, որի հետևանքով ձևազերծում կամ շփոթվել են նրանց աշխատությունները, կամ էլ ասվել է ընդհանուր ձևով՝ «Վարդանայ վարդապետի արարեալ»: Որոշ ուսումնասիրողներ էլ նրան շփոթել են Կիրիկյան Հայաստանի մշակութային ու եկեղեցական գործիչ Վարդան Բարձրբերդցու հետ և Արևելցու «Հաւաքումն պատմութեան» երկը հրատարակել նրա անունով: Այնինչ Վարդան Բարձրբերդցին ձեռագրած պետք է լինի Կիրիկիայի Բարձրբերդ ավանում, հավանաբար 13-րդ դարի երկրորդ քառորդում: Նա իր կրթությունն ստացել է Կիրիկիայում և իր կյանքը հիմնականում անցկացրել այնտեղ²:

Վարդան Արևելցիի մեծ ճանաչման է արժանացել դեռևս իր կենդանության ժամանակ և ժամանակակիցների կողմից վաստակել «անյաղթ հոետոր», «իմաստախոհ», «քաջաբան մեկնիչ», «հոգիապայծառ», «աշխարհալուր և տիեզերալոյս քարոզիչ», «արդիւնական», «եռամեծ», «սուրբ», «հույակաւոր և մեծիմաստ», «նոր լուսաւորիչ» և այլ պատվանունները:

Վարդան Արևելցիի թողել է ստեղծագործական բազմաթանր ու հարուստ ժառանգություն, ավելի քան 120 աշխատություն: Նա կատարել է մեկնություններ, գրել «Լուծմունք Ս. Գրոցը» («Ժղլանքը»), քերականական աշխատություններ, «Աշխարհացոյցը», շարականներ, խրատներ, ճառեր, պատմագիտական աշխատություններ, կատարել թարգմանություններ, խմբագրել տարբեր տիպի աշխատանքներ և այլն: Բայց նրա գլուխգործոցը և հայ միջնադարյան պատմագրության նշանակալից հուշարձաններից մեկը «Հաւաքումն պատմութեան» երկասիրությունն է, որն ունի պատմաճանաչողական, աղբյուրագիտական (եթեմն՝ անփոխարինելի) արժեք: Այդ երկը համընդհանուր պատմություն շարադրելու նոր փորձ էր, որն սկսվում է արարչագործությունից և հասնում մինչև Հայոց կաթողիկոս Կոստանդին Ա. Բարձրբերդցու մահը (1267 թ.):

Մեր պատմիչներից շատերը (օրինակ, Մովսես Խորենացին, Ղազար Փարպեցին, Ճղիշեն և այլն) իրենց պատմությունները գրել են որևէ պատվիրատուի խնդրանքով, իսկ Վարդան Արևելցիի պատվիրատու չի ունեցել: Բացի դրանից, նա իր պատմությունը չի նվիրել որևէ իշխանական տան կամ նշանավոր տոհմի, բայցևայնպես երկից բացահայտորեն երևում է նրա համակրանքը Բագրատունիների և Զաքարյանների նկատմամբ:

Վարդան Արևելցիի իր պատմությունը գրել է կյանքի վերջին տասը տարիների ընթացքում, պարբերաբար, հատկապես դասավանդման տարիներին: Նշեցինք, որ նա իր աշխատանքն ավարտել է 1267 թ., բայց մինչև այդ, այն է՝ 1265 թ. նրա երկը գողացվել է և մեկուկես տարի անց վաճառվել Տփլիսում: Գիրքը գնել է հեղինակի մերձավորներից մեկը՝ Մելիքը և վերադարձրել տիրոջը: Այդ մասին գրում է ինքը՝ Վարդան Արևելցիի, իր պատմության մեջ. «Յաւուրս յայս ի մեղաց իմոց անկաւ գրթունկս ի ձեռս հարամեաց, տղայօք մեր, և յողորմութենէն Ցիսուսի ապրեցան տղայքն առ ժամն. և յետ ամի և կիսոյ գիրքս ի Տփլիս ի վաճառ բերեալ և գնեալ ի

¹ Տե՛ս Մեծիկ Վարդանայ Բարձրբերդցոյ Պատմութիւն տիեզերական, ի լոյս ընծ. Մկրտիչ էմին, Մոսկվա, 1861:

² Տե՛ս Փ. Անբալայան, Վարդան Արևելցի, Կյանքն ու գործունեութիւնը, գիրք Ա, Երևան, 1987, էջ 32:

տանէ եղբոր մերոյ միոյ Մելեր կոչեցնելու: Վասն որոյ ողորմութեան Տևանն փառք ի սուրբս ամենայն և յարարածս, և զնողին զսա՝ գթութիւն ի Քրիստոսէ»³:

Շատ ուսումնասիրողներ ենթադրում են, որ Վարդան Արևելցին իր պատմութիւնը գրել է Կայննաբերդի ս. Անդրեի, Հաղպատի և Խոր Վիրապի վանքերում:

Արդեն նշվեց, որ Վարդան Արևելցու Երկասիրութիւնը համընդհանուր կամ, ինչպես հնում էին կոչում, տիեզերական պատմութիւն է: Մինչև իր պատմութիւնը գրելը նա արդեն ծանոթ էր նմանատիպ աշխատութիւններին: Դրանցից էին Ստեփանոս Տարոնեցու (Ասողիկի) «Տիեզերական պատմութիւնը», Մատթեոս Ուռհայեցու և Միխայիլ Ասորու «Ժամանակագրութիւն»-ները: Վերջինիս թարգմանութիւնը իրականացրել է ինքը՝ Վարդան Արևելցին: Հետևաբար ճիշտ են այն հետազոտողները, ի թիվս նրանց և Փ. Անթապայանը⁴, որոնք կարծում են, որ Միխայիլ Ասորու «Ժամանակագրութիւն» թարգմանութիւնն ժամանակ էլ Վարդան Արևելցին հղացել է նման աշխատութիւն գրելու գաղափարը:

Վարդան Արևելցին իր պատմութիւնը գրելիս օգտվել է բազմազան ու բազմաթիվ գրքերից: Այստեղ բավարարվեց միայն զխավոր աղբյուրները թվակելով, այսպես՝ Աստվածաշունչ, Եվսեբիոս Կեսարացի, Կորյուն, Մովսես Խորենացի, Մատթեոս Ուռհայեցի, Միսիթար Անեցի, Վանական Վարդապետ, Կիրակոս Գանձակեցի և ուրիշներ: Բացի դրանցից, նա օգտագործել է նաև վիճական արձանագրութիւններ, դավանագիտական փաստաթղթեր, ժողովրդական պատումներ, առասպելներ, զրույցներ, դեպքերի մասնակիցներից լսած տեղեկութիւններ:

Բայց հարկ է նշել, որ հիշյալ աղբյուրներից քաղած նյութի նկատմամբ միշտ չէ, որ նա հանդես է բերել քննադատական մոտեցում, ինչպես, օրինակ, վարվել են Մովսես Խորենացին, Վազար Փարպեցին, Ստեփանոս Օրբելյանը և ուրիշներ իրենց պատմութիւնները գրելիս:

Վարդան Արևելցին երբեմն, հատկապես իր պատմութիւնն սկզբում, խախտել է նկարագրչող դեպքերի հաջորդականութիւնը: Այնուամենայնիվ, նրա պատմութիւնը շատ կարևոր ըսկզբնաղբյուր է ոչ միայն հայ ժողովրդի, այլ նաև արևելների, պարսիկների, հույների, արաբների, սելջուկների, մոնղոլների, խաչակիրների, եգիպտական մամլուքների և այլ ժողովուրդների պատմութիւնն վերաբերյալ: Այն արժեքավոր տեղեկութիւններ, պատմական, փաստագրական սվյաչներ է պարունակում նաև հայ-վրացական հարաբերութիւնների, Զաքարյանների, Բագրատունիների, նախարարական այլ տների, տարբեր ամիրայութիւնների, երկրի ներքին, սոցիալ-տնտեսական դրութիւն, իրավական վիճակի, ազատագրական պայքարի, մշակութային, եկեղեցական ու հոգևոր կյանքի վերաբերյալ, մասնավորապես՝ ավատատիրական հարաբերութիւնների մասին:

Վարդան Արևելցին նոր ու արժեքավոր տեղեկութիւններ է հաղորդում Հայաստանի Փառսոս գավառում հաստատված Շաղաթայան ամիրայութիւնն քաղաքական, ռազմական ու տնտեսական կյանքի մասին: Եվ նկատի ունենալով, որ այդ տեղեկութիւնները միահյուսված են տվյալ գավառում ապրող հայութիւնն պատմութիւնն հետ, դրանց արժեքը է՛լ ավելի է բարձրանում:

Պակաս կարևոր չեն Վարդան Արևելցու հաղորդած տեղեկութիւնները Անիի պատմութիւնն վերաբերյալ: Չնայած շատ տվյալների հանդիպում ենք Մատթեոս Ուռհայեցու, Սամվել Անեցու, Սմբատ Սպարապետի, Միխայիլ Ասորու, Միսիթար Գոշի, Կիրակոս Գանձակեցու և այլոց երկերում, բայց Վարդան Արևելցու տեղեկութիւններն ավելի հարուստ են:

Եթե առանձնացնելու լինենք «Հաւաքումն պատմութեան» հանգուցային մասերը, ապա կարող ենք նշել հետևյալ հիմնական բաժինները՝ արարչագործութիւնն պատմութիւնը, հայկական միացյալ պետականութիւնն կազմավորումը, Արտաշեսյան հարստութիւնն հիմնադրումը (2-րդ դարի սկիզբ մ.թ.ա.), քրիստոնեութիւնն ընդունումը, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը, հայկական թագավորութիւնն կորուստը (5-րդ դ.), հայկական պետականութիւնն վերականգնումը Բագրատունիների կողմից (9-րդ դ.), սելջուկյան արշավանքները (10—11-րդ դդ.), Հայաստանի, այդ թվում նաև Կիլիկյան հայկական թագավորութիւնն պատմութիւնը (11—13-րդ դդ.):

Անդրադառնալով «Պատմութեան» բովանդակութիւնը՝ ընդհանուր գծերով կարելի է նշել հետևյալը: Արարչագործութիւնն նկարագրութիւնը քաղաքոված է Աստվածաշնչից, Եվսեբիոս Կեսարացուց, Մովսես Խորենացուց, Միխայիլ Ասորուց, եկեղեցական հայրերի աշխատութիւններից և այլ աղբյուրներից: Ի դեպ, աշխատութիւնն այդ մասում վերաշարադրված է վերոհիշյալ երկերի նյութը: Աշխատութիւնն մեծ մասը կազմում է մինչև 12-րդ դարն ընկած ժամանակաշրջանի պատմութիւնը: Դրան հաջորդում է Արևելցու ապրած ժամանակաշրջանի պատմութիւնը, որը տվյալ աշխատութիւնն ամենահիմնական ու արժեքավոր մասն է: Աշխատութիւնն այդ բա-

³ Վարդան Արևելցի, Հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862, էջ 161:

⁴ Փ. Անթապայան, նշվ. աշխատ., գիրք Ա., էջ 62:

ծինը պատմագիտության մեջ բարձր զնահատականի է արժանացել այն պատճառով, որ հնդի- նակը մեծ մասամբ ականջալուր ու ականատես է եղել նկարագրվող դեպքերին ու իրադարձու- թյուններին: Պատմության այդ բաժինը հավաստի սկզբանորոշում է մոնղոլների սոցիալ-քաղա- քական կյանքի, նրանց արշավանքների, հարկային քաղաքականության, կենցաղի, սովորույթների և բավաբերիվ այլ խնդիրների վերաբերյալ:

«Հաւաքումն պատմութեան» աշխատությունից իմանում ենք, որ Վարդան Արևելցին մտեր- մական հարաբերություններ է հաստատել մոնղոլական Հուլավու զանի և նրա քրիստոնյա տիկ- նոջ՝ Տողուզ խաթունի հետ ու նրանց միջոցով շահել մոնղոլների բարյացակամությունը հայերի նկատմամբ:

Երբ մահանում է Հուլավուն, նրա այրին՝ մեծ թագուհի Տողուզ խաթունը, Վարդան Արևել- ցուց խորհուրդ է հարցնում, թե Հուլավուի հոգու համար «...պատարագ լինի՞ թէ ոչ»: Իսկ Վար- դան Արևելցին պատասխանում է. «...չէ պարտ պատարագ առնել, այլ ողորմութիւն և հարկաց թեթևութիւն առնէք»⁵:

Մոնղոլները մեծ ավերածություններ, թալան ու կոտորած են կատարում ոչ միայն Հայաս- տանում, այլ նաև հարևան երկրներում, մասնավորապես Վրաստանում: Արևելցին իր ապրած ժամանակաշրջանը շատ դիպուկ կերպով բնորոշում է հետևյալ ձևով. «...կրակից և վշտակից և սպակից ազգիս եղեալ ի մեղսաբեր և ի ցամախհար դարուս. և ի ժամանակս ցաւալից և ի կակծահար՝ գրողորն յինքն տարեալ և ըստ կարի թեթևացուցալ, սիրտ և բան և զանձ ծախելով առատաբար և անխնայ»⁶:

Երբ Վ. Արևելցին խոսում է հայկական և հոմեակական եկեղեցիների մասին, բոլոր դեպ- քերում ընդգծում է ոչ միայն հայ եկեղեցու անկախության խնդիրը, այլ նաև նրա հավասարու- թյունը Հռոմի և մյուս քրիստոնյա երկրների եկեղեցիների հետ: Այդ առթիվ «Հաւաքումն պատ- մութեան» աշխատության մեջ կարդում ենք. «...և սուրբ Լուսաւորիչն՝ որ պապն կոչեցաւ ի Հռոմ, հաւասար այնմ՝ որ նստի յաթոռն Պետրոսի առաքելոյն»⁷:

Չնայած Արևելցին նկարագրվող դեպքերի վերաբերյալ ցուցաբերում է քննադատական մո- տեցում, բայց միշտ չէ, որ կարողանում է գտնել քաղաքական, սոցիալական և հասարակական հարաբերությունների ու երևույթների հիմքում ընկած բուն, էական պատճառները: Շատ հաճախ դրանց հիմքում նա տեսնում է նախախնամության գործոնը: Ինչ խոսք, այդ հարցում նա մեղա- վոր չէ, եթե նկատի ունենանք նրա ապրած ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական, կրոնական, բարոյական և այլ հարաբերությունների բարդությունն ու խճճավածությունը: Ընդհա- կառակը, Վարդան Արևելցին նշված հարցում իր ժամանակի գործիչների համեմատությամբ շատ ավելի առաջդիմական է, և նրա արտահայտած բավաբերիվ մտեր ճաստատվել են հետագա դարերում:

Վարդան Արևելցու «Հաւաքումն պատմութեան»-ը, ինչպես նաև մյուս աշխատություններն ունեն բազմաթիվ ընդօրինակություններ, և աշխարհի տարբեր ձեռագրատներում (Երևանի, Վենե- տիկի, Վիննայի, Վատիկանի, Դյուրինգենի, Փարիզի և այլն) պահվում են դրանց ձեռագրերը: Իհարկե, ձեռագրերի մեծ մասը հանգրվանել է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադա- րանում⁸:

«Հաւաքումն պատմութեան» երկը ամբողջությամբ հրատարակվել է երկու անգամ: Առաջին անգամ երկու ձեռագրերի հիման վրա հրատարակել է Մկրտիչ էմինը 1861 թ., Մոսկվայում: Գիրքը, ինչպես ասացինք, խորագրված է «Պատմութիւն տիեզերական» և վերագրված է մեկ այլ վարդանի՝ Բարձրբերդուն:

Սույն գրքի երկրորդ ամբողջական հրատարակությունն իրականացվել է Վենետիկում, 1862 թ.: Գրքի վրա թեև չի նշված հրատարակչի անունը, բայց պատմաբաններն ու բանասերները ապացուցել են, որ հրատարակիչը բազմատաղանդ հայագետ, գրող, բանաստեղծ, գիտնական Ղևոնդ Ալիշանն է: Այդ հրատարակության հիմքում ընկած է Վենետիկի Մխիթարյանների մա- տենադարանում պահվող թիվ 516 ձեռագիրը, որն ընդօրինակվել է հնդիսակի մահվանից ոչ շատ ուշ, այն է՝ 1307 թ.: Այդ հրատարակությանը կցած ընդարձակ առաջաբանում, որը գրել է Ղևոնդ Ալիշանը, պարզաբանվում է Վարդան Արևելցու և Վարդան Բարձրբերդու անունների շփոթությունը: Առաջաբանում կարդում ենք. «...և ոչ միայն յիրս և ի գիրս, այլ ինձ թուի և ի հայրենեացն կոչումն սխալեալ, որոց Բարձրբերդի (ընդգծումը հնդիսակին է— Գ. Թ.) զսա- ասնն, քանզի ոչ ոք ի նախնեաց անտի կոչէ զնա այսպէս, այլ մանաւանդ բանք նոցին ցուցա- նեն յարեւելից Մեծաց Հայոց լինել զսա, և ամս ինչ պանդխտութեամբ կեցեալ ի Հռոմկայ և ոչ

⁵ Վարդան Արևելցի, Հաւաքումն պատմութեան, էջ 160—161:

⁶ Նույն տեղում, էջ 163:

⁷ Նույն տեղում, էջ 46:

⁸ Այսպես, օրինակ, «Հաւաքումն պատմութեան»՝ Մաշտոցի անվան մատենադարանում պահ- վող ձեռագրերից նկարագրվել ու ձեռագրացուցակներում արտացոլվել են թիվ 1482, 1487, 3069, 5074, 3078, 6593, 6714, 8890 ձեռագրերը:

ի Իարձրերդ. զայլ ոմն Վարդան Բարձրբրդցի ցուցանելով ժամանակակից նորին կրտսեր, որպէս յիշէ մատենագիր ոմն յամի 1286, որ է իբր վեշտասան ամալ յետոյ քան զմահ մեծիս այսորիկ Վարդանայ: Իսկ զմիւսն զայն դկրտսեր՝ Երկրորդ Վարդան կոչէ Ղազար Զահկեցի կաթողիկոս, և նմա ընծայէ զՀամառոտ մեկնութիւն շորից անտաւառաց, զԱռակսն, զՀամառոտ աշխարհագրութիւնն, զՄեկնութիւն Բերակների (ընդգծումը հրատարակչինն է— Գ. Ք.). յորոց յետինքզ կարծին երրորդի ուրումն կրտսերագունի Վարդանայ գործք»⁹: Ղևոնդ Ալիշանը գրքի առաջաբանում այնուհետև ցույց է տալիս, որ այդ երկասիրության հեղինակը Վանական վարդապետի աշակերտ Վարդան վարդապետը կամ Արեւելցին պետք է լինի, և գիրքն էլ հրատարակում է նրա անունով:

Վարդան Արեւելցու պատմութիւնը թարգմանվել է նաև օտար լեզուներով: Այն ունի ամբողջական և մի քանի հատվածական թարգմանություններ: Ռուսական առաջին ամբողջական թարգմանությունը կրկին իրականացրել է Մկրտիչ Էմիլը 1861 թ., Մոսկվայում: Այդ հրատարակությանը նա կցել է ընդարձակ առաջաբան և հարուստ ծանոթագրություններ: Այժմ մեր կողմից իրականացվում է երկի աշխարհարար ամբողջական թարգմանությունը:

«Հաւաքումն պատմութեան» երկի մյուս թարգմանությունները ոչ ամբողջական, այսինքն՝ հատվածական թարգմանություններ են, որոնք կատարել են հետևյալ հայագետները՝ Քերովքի Պատկանյանը 1874 թ. Պետերբուրգում թարգմանել ու հրատարակել է այն հատվածները, որոնք վերաբերում են մոնղոլների պատմությանը: Պատմությունից մի քանի հատվածներ ֆրանսերեն են թարգմանել հայագետներ Մ. Բրոսսեն (1839 թ.), Է. Դյուլորիեն (1860 թ.), Լ. Մարիեսը, Մյուլդերմանը (1927 թ.):

Վարդան Արեւելցին հայ պատմագրության նշանավոր ներկայացուցիչներից մեկն է: Ծիշտ է, նա չի հավասարում մեծերին՝ Մովսէս Խորենացուն, Ղազար Փարպեցուն. Եղիշէին և մյուսներին, բայց և այնպէս դասվում է առաջավոր պատմիչների շարքը: Բացի «Հաւաքումն պատմութեան» երկից նաև պատմական, փաստական հարուստ նյութ է գիտնդել Միխայիլ Ասորու «Ժամանակագրութիւն» երկի թարգմանությանը կցած իր «Յիշատակարանում»¹⁰, իր գրած ներբողներում, ճառերում, խրատներում և այլ գործերում:

Հիշատակարանում նա տալիս է նաև քաքար (մոնղոլ) անվան ստուգաբանությունը, որը շնայած պարզունակ է թվում, բայց ինքնին հետաքրքիր է ու յուրահատուկ: Այսպես՝ «...զի թերևս ճար և տար, որ է տաթար... Քանզի հարին անյագապէս և տարան աներկիւղաբար գորդիան Սիօնի ի ստրկութիւն գերութեան»¹¹:

Վարդան Արեւելցին գրել է և՛ գրաբարով, և՛ միջին հայերենով՝ բոլոր դեպքերում աշխատելով գրել ու դասավանդել ժողովրդին հասկանալի լեզվով: Նա իր գործերի մի մասը շարադրել է գուտ դասական գրաբարով. ինչպես՝ «Հաւաքումն պատմութեան»-ը, մեկնությունները, ներբողները, ճառերը, շարականները, իսկ որոշ գործեր էլ («Ժղանքը», գրույցները և այլն)՝ միջին հայերենով: Նրա լեզուն հարուստ է ու մշակված՝ շաղախված միջին հայերենի և ժողովրդախոսակցական լեզվի տարրերով:

Այսպիսով, ինչպես պարզ դարձավ այս համառոտ ակնարկից էլ, Վարդան Արեւելցին բազմակողմանիորեն զարգացած անձնավորություն է եղել, հայ մատենագրության խոշոր ներկայացուցիչներից մեկը: Նա մեծ է որպէս պատմիչ, աշխարհագրագետ, գրող, մանկավարժ, հասարակական-քաղաքական ու կրոնական գործիչ, բնագետ, տոմարագետ, տիեզերագետ, իմաստասեր, քերականագետ, թարգմանիչ, խմբագիր, գեղագետ, բարոյագետ և այլն: Եվ այդ է պատճառը, որ նա ժամանակակիցների կողմից վաստակել է բազմաթիվ պատվանուններ ու իր հաստատուն տեղը գրավել հայ մշակույթի ականավոր ներկայացուցիչների շարքում:

1. Б. ТОСУИЯН — «Всеобщая история» Вардана Аревелци. — Труд знаменитого армянского историка (1198—1271) — очень важный первоисточник для исследования прошлого не только армянского народа, но и абхазов, греков, арабов, сельджуков, монголов, содержит ценные сведения о крестоносцах, египетских мамелюках: освещает армяно-грузинские отношения, повествует о родовых династиях Захаридов, Багратидов и других нахарарских домов, о внутреннем социально-экономическом положении, феодальном укладе средневековой Армении.

⁹ Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի, Վենետիկ, 1862, էջ Ա—Բ:

¹⁰ Տե՛ս Միխայիլ Ասորի, Ժամանակագրութիւն, Վենետիկ, 1870, էջ 608—622:

¹¹ Նույն տեղում, էջ 614: